

ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
ՀՀ ԿԳՄՍ նախարարության «Երևանի Լեոյի անվան թիվ 65
ավագ դպրոց» ՊՈԱԿ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ Բայանուն հասկացությունը, նրա ձևաբանական և
շարահյուսական առանձնահատկությունները

Կատարող՝ Լուսինե Մանուկյան

«Գյումրու տնտեսագիտական վարժարան» ՊՈԱԿ

դպրոց

Ղեկավար՝ ք. գ. թ. դոցենտ Աննա Յայլոյան

անուն, ազգանուն

ԳՅՈՒՄԸ - 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Բովանդակություն.....	2
ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....	3
Գլուխ 1. Բայանուն հասկացությունը, նրա ձևաբանական և շարահյուսական առանձնահատկությունները	6
Գլուխ 2. Բայանունների թիվը	15
Գլուխ 3. Բայանուն գոյականի հոլովումը.....	17
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ.....	23
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ	25

Ներածություն

Քերականության սկզբնավորման գլխավոր դրդապատճառը մարդկային իմացության ու մտածողության օրենքների, գոյի և մտածողության հարաբերության հարցի պարզումն է: Խորանալով իմացաբանական և տրամաբանական հարցերի քննարկման մեջ՝ հին աշխարհի փիլիսոփայական միտքը չէր կարող անտարբերությամբ անցնել այնպիսի մի կարևոր գործոնի կողքով, որը «մտքի անմիջական իրողությունն է» (Մարքս):

Հունական փիլիսոփաները լեզվի հարցերով զբաղվում էին իրի, հասկացության և անվան հարաբերությունը պարզելու պրպտումների մեջ: Դեռևս Արիստոտելը բառերը բաժանեց երկու խմբի՝ նշանակություն ունեցողների (անունը և բայը) և նշանակություն չունեցողների (շաղկապը):

Հետզհետե խոսքի մասերի համակարգը ընդլայնվում էր: Օրինակ՝ ստոիկները տարբերում էին չորս խոսքի մաս՝ անուն, բայ, շաղկապ, հոդ: Բնական է, խոսքի մասերը տարանջատելիս հաշվի էին առնվում դրանց էական, հիմնական տարբերիչ հատկանիշները: Ինչպես տեսնում ենք, նախապես մեկ անվան տակ միավորվող բառերի տարբեր խմբեր հետագայում արդեն առանձնացվել են որպես տարբեր խոսքի մասեր, ինչպես ածականը, թվականը, դերանունը և այլն: Սրանցից տարբեր է բայի և անվան հարցը: Քերականության զարգացման հենց սկզբից այս երկու խոսքի մասերն իրարից հստակորեն տարբերակվել են:

Մեր աշխատանքի ուսումնասիրության առարկան բայանուններն են և դրանց լրացումները: Սրանք այնպիսի բառեր են, որոնք իրենց մեջ միավորում են երկու տարբեր խոսքի մասերի որոշ առանձնահատկություններ: Այսպես, բայանուն գոյականներին բնորոշ է երկակի էությունը (և՛ բայական, և՛ անվանական), որն օժտում է դրանց քերականական ու իմաստային առանձնահատկություններով և տարբերակում մյուս գոյականներից: Բայանունները գործողության անուն գոյականներն են. դրանք ոչ թե ցույց են տալիս գործողություն, այլ այդ գործողության անունն են, այդ գործողության առարկայական անվանումը և արտահայտում են գործողության ընդհանուր գաղափար: Ուշագրավ են բայանուն գոյականների շարահյուսական առանձնահատկությունները ևս: Ինչպես գիտենք, գոյականական անդամի լրացումները երեքն են՝ որոշիչ, հատկացուցիչ, բացահայտիչ: Ի տարբերություն բայական անդամի լրացումների՝ խնդիրների և պարագաների, որոշիչ և հատկացուցիչ իմաստային տարբերակները չեն առանձնացվում: Այսպես, բայական անդամի լրացումներն են ուղիղ խնդիրը, անուղղակի խնդիրները, տեղի, ժամանակի, չափ ու քանակի և այլ պարագաները, իսկ գոյականական անդամի հատկանիշ կամ պատկանելություն, վերաբերություն, սերում և այլ հարաբերություններ ցույց տվող լրացումների համար առանձնացնում ենք

ընդամենը երկու տեսակ՝ որոշիչ և հատկացուցիչ: Հատկապես բայանունների լրացումների ուսումնասիրության ժամանակ պարզվում է, որ դեռ ավելին, որոշիչները կարող են արտահայտել նաև հանգման խնդրային իմաստ (*մատուցում հայերին*), անջատման խնդրային իմաստ (*փախուստ անկախությունից*), տեղի պարագայական իմաստ (*հանդիպում ծովեզրին*), ժամանակի պարագայական իմաստ (*գողություն օրը ցերեկով*) և այլն:

Բայանուն գոյականների առանձնահատկությունների քննությունը զբաղեցրել է դեռևս գրաբարի քերականներին:

Լեզվաբան Լ. Մաքսուդյանը 1984թ. հրատարակում է «Բայանուն գոյականը ժամանակակից հայերենում» աշխատությունը, որը ամբողջությամբ նվիրված է բայանուն գոյականներին: Նա բայանունների շարքը ամփոփել էր առավելագույն ընդգրկմամբ՝ ներառելով բայահաղորդ գոյականները:

Մեր ուսումնասիրության հիմնական նպատակը, ընդհակառակը, այդ շարքի սահմանափակումն է, այն է՝ բայանունների շարքը դասել զուտ գործողության անուն գոյականները, քանի որ հենց վերջիններս են առանձնանում իրենց քերականական և շարահյուսական առանձնահատկություններով:

Բայանուն գոյականների առավել ցայտուն առանձնահատկություններից են վերացականությունը, մակբայ լրացում ստանալը: Բայանուն գոյականների, ինչպես գոյականների մեծ մասի համար, օրինաչափ է ածականով, թվականով, դերանունով լրացում ստանալը: Փոխարենը ուշագրավ են բայանուն գոյականների՝ գոյականի տարբեր հոլովաձևերով լրացումներ ստանալը, ինչպես նաև կապերով և կապական խնդիրներով լրացումները:

Աշխատանքում ներկայացված բոլոր օրինակները մամուլից են վերցված՝ թե՛ Էլեկտրոնային (Լրագիր.am, News.am, Թերթ.am, Մարդիկ.am, Լուրեր.com), թե՛ ավանդական (Առավոտ, Հայկական ժամանակ, Ազգ, 168 ժամ):

Մեր ուսումնասիրության արդիականությունը պայմանավորված է մամուլում, հատկապես վերնագրային-անվանողական կապակցություններում, բայանունների կիրառության իմաստային նրբերանգով: Ի տարբերություն դիմավոր բայերի, որոնք ցույց են տալիս գործողություն, շարժում, դինամիկա, արտահայտում են անցողականության-անանցողականության գաղափար, բայանուն գոյականները զուրկ են այդ դինամիկայից. դրանք ուղղակի արտահայտում են ընթացայնության ընդհանուր գաղափար, ինչպես նաև վերաբերմունքի արտահայտման տեսանկյունից համեմատաբար չեզոք են:

Մեր ուսումնասիրության խնդիրն է մամուլում գտնել մեր առջև դրված նպատակներին, ուսումնասիրության առարկային համապատասխան օրինակներ, դրանց միջոցով բացահայտել բայանուն գոյականների դրսևորած առանձնահատկությունները:

Որպես *մեթոդ* ընտրվել է զննության և քննության, համեմատական վերլուծության մեթոդները:

Գլուխ 1. Բայանուն հասկացությունը, նրա ձևաբանական և շարահյուսական առանձնահատկությունները

Արդի հայերենի գոյականների մեջ, ինչպես գիտենք, առանձնացվում են բայանուն գոյականները՝ շնորհիվ իրենց իմաստային և քերականական առանձնահատկությունների: Խոսքը վերաբերում է նրան, որ բայանուն գոյականները բայերի հետ ունեն բառակազմական և ծագումնային կապ, իսկ վերջինս պայմանավորում է բայանունների քերականական առանձնահատկությունները:

Բայանուն գոյականների կազմությանն ու խնդրառությանը ուշադրություն է դարձրել և արժեքավոր դիտողություններ արել Մանուկ Աբեղյանը: Նա նկատել է, որ մեր լեզվում «հնուց ավանդված ունինք բազմաթիվ բայեր, որոնք անուններից են ածանցված, կամ, ճիշտ ասած, լեզվի մեջ կան դրանց համապատասխան գոյական կամ ածական անուններ, բայց բայն է արդյոք անունից ածանցված, թե՞ ընդհակառակը, այդ հաճախ դժվար է իմանալ»: Այսպես, օրինակ, *պատվել, թքել, կարգել, հավանել, կամենալ, կտրել-պատիվ, թուք, կարգ, հավան, կամ կամք, կտոր-կտորք* և այլն: Ապա Աբեղյանը գրում է. «նույնպես հնուց ավանդված ունինք բազմաթիվ՝ գործողության կամ գործողի անուններ իբրև արմատական բառեր իրենց համապատասխան բայերից, հաճախ «ք» տառի հավելումով, ինչպես՝ *հանել-հանք, նստել- նիստ, ածել- ած. 1. ածելը, բերելը, 2. ած, ածք, ածեր- նորատունկ., արկանել-արկ (ձգվածք, ձգած բան), ընկնել, անկանել-անկ (1. ընկած, 2. ընկնող, պատշաճ եղող և այլն)...* Բայերի մեծ մասի համար կան այնպիսի արմատական անուններ և դրանց անալոգիայով այժմ էլ հաճախ նոր անուններ են ածանցվում բայերից. այսպես, նոր կազմված են՝ *թրթռալ* բայից՝ *թրթռո, կտտրել-կտտր, կպչել-կիպ, արտագրել-արտագիր...*»: Փաստորեն, Աբեղյանը ընդհանրապես անուններից բայերի և բայերից անունների ածանցվելու հարցը չի դիտում նախորդման կամ հաջորդման տեսանկյունից, ծագումնաբանությունը շատ դժվարին խնդիր է համարում, իսկ գործողության ու գործողի անունների մասին նշում է, որ դրանք արմատական բառեր են իրենց համապատասխան բայերից:

Աբեղյանը նշում է նաև այնպիսի դեպքեր, երբ «հին ու նոր բայերից, որոնց համապատասխան անունը չկա, նոր անուններ են ածանցվում բայերի *ել, ալ, ենալ, անալ, նել, չել* վերջերը դուրս ձգելով և երկու բաղաձայնի մեջ համապատասխան *ի* կամ *ու* ձայնավորը դնելով, երբեմն նույնիսկ առանց դրան, ինչպես *ծածուկ* բառից կազմված է «*ծածկել*», իսկ վերջինիս «*ել*» վերջավորությունը դուրս ձգելով ածանցված է «*ծածկ*»:

Աբեղյանը անդրադարձել է նաև բայանունների խնդրառությանը: «Գոյականի խնդիր խոսքերն առնվում են իբրև վերադիր և վերածվելիս

դառնում են սեռական, որ և երբեմն կարող է փոխանակվել տրականով կամ անորոշ դերբայով: Այսպիսի խնդիրներ առնում են սովորաբար բայական անունները, ինչպես են՝ *խորհուրդ, կամք, հույս, հավատ, հրաման, միտք, ենթադրություն* և այլն: Օրինակ՝ *մի առու, որ ջուր գա, հույս կա, որ մին էլ գա ՔԱ.՝ ... հույս կա մին էլ գալու. – մին էլ գալու հույս կա*: Նրա կարծիքով բայանուն գոյականները գերազանցապես սեռական հոլովով խնդիրներ են առնում՝ ենթակայական սեռական և առարկայական սեռական: «Միննույն բայական անվան հետ սեռականը կարող է և՛ իբրև ենթակայական, և՛ իբրև առարկայական ըմբռնվել, առանց նշանակության փոփոխության, օրինակ, *մեռելի թաղումը, երեխաների կրթությունը*, կարելի է հասկանալ ներգործական իմաստով իբրև առարկայական սեռական՝ *մեռելին թաղելը, երեխաներին կրթելը*, և կրավորական իմաստով, իբրև ենթակայական սեռական՝ *մեռելի թաղվելը, երեխաների կրթվելը*»:

Միննույն սեռականը բայական անվան հետ կարող է տարբեր նշանակությամբ Քթե՛ իբրև ենթակայական, թե՛ իբրև առարկայական խնդիր՝ հասկացվել. օրինակ՝ *Աստուծու սերը, թշնամիների վախը* կարող է հասկացվել՝ *Աստուծու սիրելը, թշնամիների վախենալը, և Աստուծուն սիրելը, թշնամիներից վախենալը*:

Միննույն անունը չի կարող միաժամանակ ենթակայական և առարկայական սեռականներ ունենալ, օրինակ. «*Ծաղների որդիների սերը*»:

Երկրորդական խոսքերի տեսակներին նվիրված բաժնում Աբեղյանը գրում է, որ «երկրորդական խոսքերը վերածվում են ավելի թեթևությամբ դերբայներով, քան ուրիշ բառերով: Դերբայները՝ իբրև բայահաղորդ բառեր, ունին բայական սեռ և առնում են նույն խնդիրներն, ինչ որ բայերը, բացի այդ՝ հաճախ ցույց են տալիս և ժամանակ», ինչպես նաև «անորոշ դերբայը և նույն բնից կազմված անունները հաճախ նշանակությամբ տարբերվում են իրարուց, մինչ դերբայը լոկ բայիմաստ է ցույց տալիս, բայական անունները, մանավանդ *–ություն* վերջածանցները, շատ անգամ լոկ գործողություն չեն նշանակում, այլ վերացական վիճակ, գործողության արդյունք և այլն *զիտություն- զիտենալը, զիտցած բանը, զիտենալու վիճակը* և այլն»:

Ապա Աբեղյանը ավելացնում է՝ «երկրորդական խոսքի բայը կարելի է բայական անվան փոխել, երբ խնդիրներ չունի, կամ եթե խնդիրներ ունի, բայական անունն ուղղական կամ հայցական հոլովով է դրվում. այս ժամանակ խնդիրները բայական անունից հետադաս են մնում, օրինակ՝ *Այն զիշերը, երբ Քրիստոս ծնվում է...- Քրիստոսի ծննդյան ծնվելու զիշերը*... Բայց երբ բայը խնդիրներ ունի, և պարզման ժամանակ դերբայը կամ բայական անունը թեք հոլովներով սեռական, տրական՝ պիտի դրվեն, այն ժամանակ բայը վերածվում է սովորաբար անորոշ դերբայի օրինակ՝ *Այն զիշերը, երբ Քրիստոսը ծնվում է մարում...- Քրիստոսի՝ մարում ծնվելու զիշերը- և ոչ՝ Քրիստոսի՝ մարում ծննդյան զիշերը*»:

Հայերենի բային նվիրված իր ծավալուն ուսումնասիրության մեջ բայանվան մասին արժեքավոր դիտողություններ է արել Աշոտ Աբրահամյանը: Նա առանձնապես կանգ է առել բայի ու բայանվան խոսքիմասային տարբերակման և նրանց ծագումնաբանությանը վերաբերող հարցերի վրա: Ա. Աբրահամյանն ընդգծում է, որ ինչպես ժամանակակից հայերենում, այնպես էլ այլ լեզուներում կան բառեր, «որոնք ևս կարող են պրոցեսի գաղափար արտահայտել, բայց որպես խոսքի մաս բայերի ոլորտից դուրս են: Այստեղ խոսքը վերաբերում է որոշ կարգի գոյական անունների, որոնք հանդես են գալիս իբրև գործողության, եղելության, իրողության անվանում, որպես առարկայացված հասկացություն»: Այս տիպի գոյականները համապատասխան բայերի հետ միատեսակ իմաստներ են արտահայտում, որովհետև այդ «գուգահեռ ձևերի հիմնական ձևայինները ընդհանուր են»,- գրում է Աբրահամյանը: Սակայն միևնույն գործողությունը կամ եղելությունը անվանող գոյական անունները և բայերը տարբեր ձևով են արտահայտում իրենց հիմքում ընկած ընդհանուր իմաստը, ուստի և նրանք «տարբեր են ընդհանուր իմաստի արտահայտման բնույթի տեսակետից»: Այստեղից է գալիս նաև քերականական կարգերի տարբերությունները. մասնավորապես բայերին բնորոշ է սեռի կարգը, որից զուրկ են այլ խոսքի մասերին պատկանող բառերը, այդ թվում նաև բայանունները:

Ա. Աբրահամյանը անդրադարձել է նաև բայի և անվան նախնականության հարցին: Նա վկայակոչում է Ա. Պոտեբնյային և լիովին համաձայնում նրա հետ, որ առարկան և նրա բայական ու անվանական հատկանիշները բառերի նախաձևային շրջանում ունեցել են համատեղ արտահայտություն, և որքան գնում ենք դեպի պատմության խորքերը, այնքան վերանում են բայի և անվան տարբերությունները:

Սակայն հարկ է նշել, որ դեռևս անտիկ ժամանակներում, երբ քերականությունը որպես գիտություն չէր էլ առանձնացել, այլ ամուր կապված էր փիլիսոփայության հետ, Արիստոտելը, ապա նաև ստոիկները և շատ ուրիշ մտածողներ անունը և բայը առանձնացնում էին որպես տարբեր խոսքի մասեր: Իսկ հայ քերականներ Դավիթը և Առաքել Սյունեցին այս երկու խոսքի մասերից առաջնությունը տալիս էին անունին՝ բերելով մի քանի փաստարկներ. «Վասն երեք պատճառի անունն յառաջ է քան զբայն: Նախ՝ զանունն զբնութիւն իրեն ցուցանէ, իսկ բայն զագդումն միայն. Այսինքն անուն որպէս մարդ, իսկ բայն որպէս գործ ի նմանէ և պարտ է նախ մարդոյն լինել և ապա յետոյ գործ ինչ...»: Սրանից կարող ենք անել հետևյալ ենթադրությունը. նախապես եղել են անունները ներառյալ բայարմատները, որոնք բայանունների շարքում են, ապա բայերը և հետո նոր միայն այն բայանունները, որոնք առաջացել են բայերից:

Ա. Աբրահամյանը գրել է. «Անվան բայացումը կամ բայարմատի առանձնացումը և անկախ կիրառությունը բխում են լեզվի էությունից և

լեզվի միջոցով զանազան հասկացությունների արտահայտման անհրաժեշտությունից»:

Այսինքն՝ խոսքի մասերի գոյացման հաջորդականությունը պարզելը գրեթե անհնար է, ինչպես նաև բայանուն գոյականների առաջացման համար որևէ կոնկրետ գործող օրենք սահմանելը:

Բայանունների հարցի պատմության քննությանը մանրամասնորեն անդրադարձել է Լ. Մաքսուդյանը իր «Բայանուն գոյականը ժամանակակից հայերենում» աշխատության մեջ: Սա բայանուններին նվիրված առաջին ծավալուն աշխատանքն էր, որում նա անդրադարձել է բայանվան թե՛ բառակազմական, թե՛ ձևաբանական, թե՛ շարահյուսական առանձնահատկություններին:

Արդի հայերենում բայանունների կոնկրետ սահմանում չունենք: Որոշ լեզվաբաններ, բայանուն գոյական ասելով, հասկանում են գործողության անուն գոյականները, իսկ մի մասը դրանց շարքին է դասում նաև այն բոլոր գոյականները, որոնք բայահաղորդ են, թեև բայի իմաստի հետ կապված են ոչ անմիջականորեն, օրինակ, գործողության միջոցը, գործիքը, առարկան, գործողության արդյունքը, հետևանքը, գործողության կատարողը:

Լեզվական ցանկացած իրողություն պիտի ունենա իր սահմանումը: Ըստ վերջինիս էլ տարբերակվում են միավորների առանձնահատկությունները: Բայանունը՝ որպես գոյականի տեսակ, ևս պիտի ունենա իր սահմանումը (ինչպես, օրինակ, գոյականների մյուս տեսակները՝ թանձրացական-վերացական, անձ-ոչ անձ ևն):

Այսպես, բայանունները գործողության անուն գոյականներն են և համապատասխան բայից տարբերվում են լեզվական արտահայտությամբ և գոյականին բնորոշ քերականական առանձնահատկություններով:

Ինչպես գիտենք, Մ. Աբեղյանը դերբայները բայ խոսքի մասի մեջ չի մտցնում, այլ դրանք բաշխում է մյուս խոսքի մասերի մեջ: Նա «Հայոց լեզվի տեսություն»-ում գոյականի համար առանձնացնում է հետևյալ տեսակները՝ «անուն գոյական կամ կամ գոյական անուն, հաճախ լոկ անուն, թվական գոյական, դերբայ գոյական կամ բայանուն, սովորաբար՝ անորոշ դերբայ, դերանուն գոյական կամ գոյական դերանուն»: Աբեղյանը պնդում է, որ առանց դեմքի բայ չկա:

Անվանելով գործողություն՝ անորոշ դերբայն ու գործողության անուն գոյականները հանդես են բերում մասնակի քերականական տարբերություն, ինչպես օրինակ՝ անորոշ դերբայի արտահայտած գործողության կատարողն ու կրողը հանդես են գալիս իբրև կողմնակի ենթակա ու կողմնակի խնդիր՝ ուղղական-հայցական կամ սեռական-տրական հոլովով: Այս նույն

խնդրառական առանձնահատկությունը ունեն նաև գործողության անուն գոյականները, այն տարբերությամբ միայն, որ ուղղական-հայցական հոլովի փոխարեն հանդես է գալիս ենթակայական կամ առարկայական սեռականը: Այդ է պատճառը, որ անորոշ դերբայով և նրա լրացում սեռական-տրականով բառակապակցության մեջ գործողության անուն բայանունը կարող է գրավել անորոշ դերբայի տեղը՝ առանց խախտելու այդ բառակապակցության իմաստը և նրա բաղադրիչների միջև եղած հարաբերությունը: Այսպես, օրինակ, **զիրք ընթերցել- գրքի ընթերցումը, տղայի վագելը- տղայի վագըր:**

Լ. Մաքսուդյանը իր վերոնշյալ աշխատության մեջ բայանունների տեսակավորման մասին գրում է. «Քանի որ գործողությունն ընդհանրապես ունի կատարող, ինչպես նաև՝ գործողության միջոց, գործիք, առարկա, իսկ գործողության կատարման շնորհիվ ստացվում է արդյունք, հետևանք հաճախ արտահայտվում են բայի հետ նույնահիմք կամ բայից ածանցված գոյականով, որոնք գործողության անուն գոյականների հետ միասին դիտվում են իբրև բայանուններ»:

Կարելի է և չհամաձայնել. ի վերջո **սեղան** և **փլատակ** բառերը լեզվում որևէ լեզվաբերականական տարբերություն հանդես չեն բերում: Բացի դրանից, չենք կարող բայանունների շարքը դասել այն բոլոր գոյականները, որոնցից կարող ենք համապատասխան վերջածանցներով բայ ստանալ կամ հակառակը. բայից անջատելով վերջածանցը՝ բառակազմության միջոցներով ստանալ գոյական: Օրինակ՝ մենք **տեսնել** բայից ունենք **տեսք** գոյականը, բայց սա բայանուն չէ, քանի որ գործողության անուն չէ, կամ՝ **երգ-երգել:** Բայանունների շարքին չպետք է դասել նաև ածականներից կազմված գոյականները, օրինակ՝ **լավություն, դժգոհություն, երկարություն, գրկում:** Ճիշտ է, մենք կարող ենք այս ածականներից կազմել բայեր, բայց սրանք բայարմատներ չեն, ուստի և բայանուն գոյականներ լինել չեն կարող: Այս մասին է վկայում նաև այն փաստը, որ ոչ բոլոր ածականներից կարող ենք բայեր կազմել, մինչդեռ համապատասխան գոյականները ունենք, օրինակ՝ **բարի-բարություն, լայն-լայնություն ևն:**

Այսպիսով, բայանունները գոյականի առանձին տեսակ ճանաչելու գերագույն խնդիրը ոչ թե բայարմատ գոյականների առանձնացումն է, այլ բային հարաբերակից գոյականների լեզվաբերականական առանձնահատկությունների ի հայտ բերումը:

Բայանունները ունեն նաև այլ առանձնահատկություններ, որոնք բնորոշ են գրեթե բոլոր գործողության անուն գոյականներին, օրինակ՝ անհաշվելիությունը, վերացականությունը, մակբայ լրացում ստանալը. հասկանալի է, որ սրանք բխում են բայի հետ ունեցած սերտ առնչությունից:

Լ. Մաքսուդյանը, հետևելով իր դասակարգմանը, այնպիսի գոյականներ, ինչպիսիք են *քննիչ, տպագրիչ, վարորդ, մարզիչ (գործողի անուն), լուծույթ, թխվածք, գործվածք, խառնուրդ, ձևվածք (գործողության արդյունք), մերան, շշակ, սրիչ, մամլիչ, փական, քարշակ (գործողության միջոց)* մտցնում է բայանունների շարքը: Դժվար չէ նկատել, որ դրանք չունեն այն առանձնահատկությունները, որոնցով մենք տարբերակում ենք բայանունները:

Ընդ որում, Լ. Մաքսուդյանը, իր աշխատության հետագա գլուխներում անդրադառնալով բայանունների դրսևորած ուշագրավ առանձնահատկություններին, անընդհատ նշում է, որ դրանք առավելապես բնորոշ են գործողության անուն գոյականներին:

Այսպես, «բայանունների ամենաուշագրավ առանձնահատկությունը գործողության անուն գոյականներին բնորոշ բայիմաստի խնդիրներ առնելու առանձնահատկությունն է»:

Հեղինակը նշում է նաև, որ «բայականությունը» առավել բնորոշ է գործողության անուն բայանուններին»:

Ինչպես գիտենք, մեկ խոսքի մասին յուրահատուկ որոշ կարգեր մասամբ բնորոշ են նաև այլ խոսքի մասերի: Բայական սեռը, կերպը, ժամանակը, ըստ Պեշկովսկու, հիմնականում բնորոշ լինելով բային, մասամբ տարածվում են նաև այլ խոսքի մասերի վրա: Նա հատկապես ընդգծում է, որ կերպի քերականական կարգը միավորում է բայանուն գոյականները, ածականները և մակբայները:

Բայց հետագայում նա և ուրիշ լեզվաբաններ ապացուցեցին, որ գործողության որոշ անունների արտահայտած պրոցեսի տևականությունը, ընթացայնությունը դեռևս կերպի դրսևորում չէ:

Կերպի մասին առաջինը խոսել է Աբեդյանը: Նա գրում է. «բայերի ցույց տված ամեն եղելություն կարող է երեք ժամանակի նկատմամբ ևս, այսինքն՝ թե՛ խոսողի ներկայի, թե՛ մի անցյալ կամ մի ապառնի ժամանակակետի նկատմամբ, լինել չորս կերպ կատարվող, կատարված, կատարելի և պարզ»:

Հասկանալի է, որ *աճեցում, անջատում, խավարում* բայանունների արտահայտած ընթացայնության գաղափարը որևէ ժամանակային կետի հետ հարաբերության մեջ չի մտնում: Հետևաբար տեղի է ունենում Պեշկովսկու նախնական պնդման ճիշտ հակառակ երևույթը: Կերպի քերականական կարգը, բնորոշ լինելով բայի դիմավոր ձևերին, չի տարածվում դերբայների վրա, որի հետևանքով անորոշ դերբայը և բայանուն գոյականները ձեռք են բերում ընդհանրություն: Դեռ ավելին, որոշ բայերի դեպքում, որոնցից չունենք բայանուն գոյական, երբ հարկ է լինում

այդ գործողությունը դիտելու իբրև վերացական առարկա, վերցնում ենք անորոշ դերբայները:

Օրինակ՝ Նայելը քիչ է, տեսնել է պետք: (Ա1+)

Հանրային լողափ ոտքով գնալը կարող է վտանգավոր լինել կյանքի համար:
(Մլաք.am)

Չգիրանալու համար միայն քիչ ուտելը բավարար չէ:

(Թերթ.am)

Հաջորդ քերականական կարգը, որը բնորոշ է բային, սեռն է: Վերջինս կապվում է անցողականություն-անանցողականության հետ, որը արտահայտվում է գործողություն-օբյեկտ փոխհարաբերության միջոցով: Սեռի կարգի շարահյուսական դրսևորումը սեռի խնդրատությունն է, ընդ որում սեռի խնդիրներն են ուղիղ խնդիրը և ներգործող խնդիրը:

Բայանուն գոյականներին հատուկ չէ ուղղական-հայցական հոլովով կրող խնդիրներ առնելու առանձնահատկությունը: Սովորաբար բայական կառույցի կրող խնդիրը բայանվանական կառուցվածքում վերածվում է սեռական հոլովով խնդրի:

Օրինակ՝

Մեր հիմնական խնդիրը որակի ապահովումն է:

(Առավոտ)

Բայց՝ Ուսման որակ ապահովելու համար պետք են նաև ֆինանսական ներդրումներ:

Անկարան դեմ չի լինի Սիրիայի հյուսիսում քրդական ինքնավար շրջանի ստեղծմանը:

Բայց՝ Հյուսիսային Կորեան ստեղծել է իր առաջին սմարթֆոնը:

(Թերթ.am)

Մոնա Լիզայի գաղտնիքը կարող է շուտով բացահայտվել:

(Թերթ.am)

Բայց՝ Կիրեղիանցագործությունների բացահայտման ուղղությամբ կա դրական տեղաշարժ: (Թերթ.am)

Զրկված լինելով ուղղական-հայցականով կրող խնդիր ունենալու առանձնահատկությունից՝ բայանունները որոշ դեպքերում կարող են ունենալ ներգործող խնդրի իմաստ արտահայտող լրացում:

Օրինակ՝ խնդրի լուծումը նախարարության կողմից

(խնդիրը լուծվեց նախարարության կողմից)

որակի ապահովումը եվրոպական ասոցիացիայի կողմից (որակ ապահովվեց եվրոպական ասոցիացիայի կողմից)

շրջանի ստեղծումը քրդերի կողմից- շրջան ստեղծվեց քրդերի կողմից

Օրինակներում, թե՛ իմաստային, թե՛ քերականական դրսևորման տեսակետից, փաստորեն, գործ ունենք ներգործող խնդիրների հետ: Օրինակները վկայում են նաև այն մասին, որ այնքանով, որքանով սեռի կարգը կապված է բայիմաստի հետ, իսկ բայիմաստ ունեն նաև գործողության անունները, այդ բայիմաստի կրավորականությունից բխող խնդրատությունը դրսևորվում է շարահյուսական մակարդակում:

Բայանուն գոյականները, սակայն, չեն կարող *-վ-* ածանց ունենալ և հակադրությունների շարքեր կազմել: Միննույն բայանունը կարող է արտահայտել միաժամանակ և՛ ներգործական, և՛ կրավորական սեռի իմաստ, և միայն տվյալ կիրառության մեջ կարող ենք որոշել, թե որ իմաստով է կիրառված բայանունը, այսինքն՝ *ստեղծումը* և՛ *ստեղծելն* է, և՛ *ստեղծվելը*, *բացահայտումը* և՛ *բացահայտելն* է, և՛ *բացահայտվելը*:

Սա ևս մեկ ապացույց է Մ. Ասատրյանի պնդման, թե «որովհետև ներգործական ու համապատասխան կրավորական սեռի, ինչպես և չեզոք ու համապատասխան կրավորական սեռի, ինչպես և չեզոք ու համապատասխան ներգործական սեռի բայերը իրարից միայն քերականորեն են տարբերվում, ուստի այդ գույգերը ազատ կերպով կարելի է համարել նաև բառաձևեր»:

Մինչդեռ, ինչպես գիտենք, քերականագիտական մտքում առկա է նաև այնպիսի կարծիք, որի համաձայն *լուծել-լուծվել*, *մշակել-մշակվել* և այլ բայական գույգերը ոչ թե քերականական կարգով են միայն տարբերվում, այլև բառիմաստային: Մ. Գալստյանը գրում է. «Վ-ն արդի հայերենի կրավորականի սեռային ածանցն է»:

Այսպես, բային է միայն հատուկ ուղղական-հայցական հոլովով կրող խնդիր առնելու և սեռային հակադիր գույգեր, հակադրությունների շարքեր կազմելու առանձնահատկությունը:

Սա այն հիմնական տարբերությունն է, որ առկա է բայանուն գոյականների և բայերի անդեմ ձևերի միջև:

Ինչպես նշեցինք, բայանուն գոյականները առանձնանում են նաև իրենց ձևաբանական առանձնահատկություններով:

Գլուխ 2. Բայանունների թիվը

Բայանուն գոյականների թվի կարգը պայմանավորված է դրանց վերացականության աստիճանով: Ձուտ գործողության անուն գոյականները վերացական են, հետևաբար և անհաշվելի: Որպես կանոն սրանք գուրկ են հոգնակի թվի կազմության հնարավորությունից: Օրինակ՝ *վազք, այց, քաղ, եռ, եփ, ճանաչում, մարում, հովանավորություն, ազատագրություն, ապաքինություն, շոյանք, զգվանք*:

Այս մասին Ջահուկյանը գրում է. «Ձրո վերջավորության և հիմնական (*եր/ներ/իկ/այք*) վերջավորությունների հակադրությունը նպատակ ունի առաջին հերթին արտահայտելու բովանդակության պլանի միաթվության (եզակիության) և անմիաթվության (հոգնակիության) հակադրությունը: Սակայն այս հիմնական հակադրությունը հանդես է գալիս անունների միայն որոշ տիպերի դեպքում, որոնց մեջ հիմնականը հաշվական հասարակ անուններն են՝ *գիրք, քաղաք, մարդ, կին* և այլն: Այլ դեպքերում այս հիմնական հակադրությունը փոխակերպվում կամ լրացվում է տարբեր չափով, ընդհուպ մինչև լիակատար չեզոքացում»:

Ապա խոսելով վերացական գոյականների մասին՝ նա նշում է. «Ժամանակակից հայերենում հոգնակիի *-եր, -ներ* վերջավորությունները կարող են դրվել վերացական անունների վրա կամ իմաստի որոշ կոնկրետացման հետ կապված (*օրինակ՝ եզրակցություններ, խոստումներ, լուծումներ* ևն) կամ շարահյուսական որոշ պայմաններում՝ մի քանի անգամ կրկնվելը կանխելու, այլև արտահայտած հատկանիշի դրսևորման տարբերությունները ընդգծելու համար»:

Պարզ է, որ եթե բայանունը ձև է բերում իմաստի թանձրացականություն, ապա նա կունենա միաթվության ու անմիաթվության հակադրություն՝ բովանդակության պլանում և այդ հակադրության դրսևորումը՝ արտահայտության պլանում: Մենք ունենք մի շարք գոյականներ, որոնք թեն բայահաղորդ են, գուցե և եղել են գործողության անուն գոյականներ, բայց այժմ դրանք ձև է բերել իմաստի թանձրացականություն և հեշտությամբ ստանում են հոգնակերտ մասնիկներ՝ դուրս մնալով բայանունների շարքից, *օրինակ, ջնջում-ջնջումներ, ուղղում-ուղղումներ, ներկայացում-ներկայացումներ*: Բայց մի շարք բայանուններ դեռևս ամբողջովին չեն թանձրացականացվել՝ ապահովելով երկակի կիրառություն՝ և՛ որպես գործողության անուն գոյական, և՛ որպես թանձրացական գոյական: Հատկաբար, առաջին դեպքում այդ գոյականները ստանում են հոգնակերտ մասնիկներ, երկրորդ դեպքում՝ ոչ:

Օրինակ՝ Խորհուրդ է տրվել գերծ մնալ ժամանցային հաղորդումներ ցուցադրելուց:

Ոստիկանները հաղորդում են ընդունել «Արմենիա Թրդեյ» Արգիշտի Կիվիբրյանից: (Առավոտ)

Այն, որ Քոչարյանի անվան հոլովումը պատահականություն չէ, ակնհայտ է: (Լուրեր.com)

Հիշատակված հոլովումներին չեն պատկանում սեր և աղջիկ գոյականները:

Այսպես, ստացվում է, որ բայանունները հոգնակերտ մասնիկ ստանում են իմաստային և ոճական միայն որոշ կիրառություններում: Վերջիններս էլ հազվադեպ են հանդիպում մամուլում:

Օրինակ՝ Օմբուդսմենը Ոստիկանապետին է փոխանցել ընտրակաշառքի, կրկնաքվեարկության և լցոնման առերևույթ հիմնավոր 10 հաղորդումներ: (Մարդիկ.am)

Հոգնակերտ մասնիկ ստանալը հատկապես բնորոշ է այնպիսի բայանունների, որոնք կապվում են ձայների հետ, ինչպես՝ **ահազանգ, կրակոց, թրմփոց, խզոց, թշշոց, կոչ** և այլն:

*Օրինակ՝ Օմբուդսմենի 116 թեժ գծի և արագ արձագանքման ծառայությունը ստացել էր 255 **ահազանգեր**: (Մարդիկ.am)*

Արմեն Աշոտյանը՝ դասադուլի կոչերի մասին (Առավոտ)

Ծեծկոտուք Երևանի Շահամիրյանների փողոցում, հնչել են կրակոցներ: (Թերթ.am)

Հոգնակի կազմության և հոգնակիության իմաստի արտահայտման տեսակետից դրսևորվում է անորոշ դերբայի և գործողության անուն գոյականների մի էական տարբերություն: «Եթե անորոշի հոգնակին ընդգծում է գործողությունը կատարողների հոգնակիությունը, ապա բայանվան հոգնակին ընդգծում է սոսկ գործողության կատարման բազմապատիկությունը, տևականությունը (**դիտումներ-դիտելները**)»:

Գլուխ 3. Բայանուն գոյականի հոլովումը

Հոլովը քերականական կարևորագույն կարգերից է, որը բնորոշ է գոյականներին և դերանունների մի մասին: Գ. Ջահուկյանը ասում է. «Փոփոխական բառերի քննությունը բացահայտում է փոփոխության երկու տեսակ, որոնք ավանդաբար հայտնի են հոլովում և խոնարհում անուններով: Համեմատելով հոլովվող և խոնարհվող բառերը՝ կարելի է պարզել, որ իմաստային տեսակետից հոլովվող բառերը կազմում են առարկայանիշ բառերի կամ ավանդական անվանմամբ գոյականի կարգը, իսկ խոնարհվող բառերը՝ եղելություն (գործողություն, վիճակ, շարժում, պրոցես) վերջին հաշվով առարկաների շարժման ու հարաբերության տարբեր տիպեր նշանակող բառեր կամ ավանդական անվանմամբ, բայերի կարգը»:

Հոլովը, լինելով քերականական կարգ, գործում է քերականության երկու՝ ն՝ ձևաբանական, և՝ շարահյուսական մակարդակներում: Իր ձևակազմությամբ և արտահայտած քերականական իմաստներով այն ձևաբանական մակարդակի միավոր է, խոսքի մեջ ունեցած իր գործառույթով՝ շարահյուսական մակարդակի:

Ժամանակակից արևելահայերենը ունի անվան հինգ ձև, հետևաբար հինգ հոլով՝ հիմնված հոլովաձևերի հակադրության վրա: Նույնիսկ այն քերականները, ովքեր ընդունում են վեց կամ յոթ հոլովի տեսությունը, չեն կարող հերքել, որ անվան համար ունենք ընդամենը այս հինգ բառաձևը:

Արդի հայերենում բայանունները հոլովվում են տարբեր թեքություններով, մասնավորապես՝ *ի*, *ան*, *յան*, *վան* վերջավորություններով և *ու/ա* հերթագայությունով: Ինչպես գիտենք, Ջահուկյանը իր «Ժամանակակից հայերենի տեսության հիմունքներում» տվել է հոլովանիշ թեքությունների գործածության պայմանները, որից հետևում է, որ *ան*-ը, *յան*-ը, *ու/ա*-ն ձևաիմաստային են, *վան*-ը՝ պատմական, *ի*-ն՝ ընդհանրական: Թե որ բառային խմբերն են պատկանում այս հոլովումներին, ներկայացված են աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1

<i>Թերություններ</i>	<i>Դրանց գործածության պայմանները</i>
ի	բայանունների զգալի մասը
ան	ում-ով վերջացող բայանուններ
յան	_ուստ/_ունդ/_իստ-ով վերջացող
ու/ա	_ություն-ով վերջացող
վան	մահ

Նշված բոլոր հոլովումներին պատկանող բայանուն գոյականները շատ հաճախ են հոլովվում **ի** ընդհանրական հոլովմամբ, և առաջ են գալիս մեծաթիվ գուգաձևություններ: Այսպես, **գալուստ, ծնունդ, կորուստ** հասարակ գոյականները կարող են հոլովվել և՛ **ի**, և՛ **յան** հոլովիչներով, իսկ **գալուստ** գոյականը հատուկ անվան դեպքում հոլովվում է գուտ **ի**-ով:

Օրինակ՝ *Նա հասկացրել է, որ Լեոնային Ղարաբաղի կորստի հետ հաշտվելու ուժ չունի: («Ազգ»)*

Խոր վշտով ընդունեցինք հայ կերպարվեստի կադնու՝ ՀՀ Ժողովրդական նկարիչ Հակոբ Հակոբյանի կորստյան լուրը: (Առավոտ)

Այսօր Մոնթե Մելքոնյանի ծննդյան օրն է. նա կդառնար 56 տարեկան: (Առավոտ)

Թվում է՝ նրա հերոսները ծնվել են առաջին հայի ծնունդի հետ: (Ազգ)

Բանն այն է, որ գարնան գալստի հետ սկսվում է նաև արտագնա աշխատանքի սեզոնը: (Առավոտ)

Սարգսյանի մուտքը Նազենին համեմատեց Մովսեսի գալստյան հետ: (Հայկական ժամանակ)

Կապանի շրջակայքում **հանգստյան գոտիներ ստեղծելու մտադրություն կա:**
(Առավուտ)

Մեկնել էր **հանգստի՝ սպանվեց** (Հայկական ժամանակ)

Չնայած ընդունված է զուգաձևություն համարել, բայց նշենք, որ մամուլում գրեթե չեն հանդիպում **գալստյան, փախստյան** բառաձևերը:

Որպես կանոն, այս զուգաձևությունների մեջ է հիշատակվում նաև **հանգիստ** բայանունը: Բայց նկատելի է, որ այս բառը այժմ գտնվում է ածական դառնալու ճանապարհին: Այդ է վկայում նախ այն, որ **հանգստյան** բառաձևը լրացական կապակցություններում չի պատասխանում գոյականական **ինչի՞** հարցին, այսպես, **հանգստյան տուն , հանգստյան գոտի** կապակցություններում **հանգստյան** բառը պատասխանում է ոչ թե **ինչի՞**, այլ **ինչպիսի՞** հարցին: Բացի այս, **հանգստյան** բառը երբեք չի գործածվում կապերի հետ, օրինակ, **հանգստյան հետ, հանգստյան առիթով, հանգստյան համար** ևն:

Զուգաձևությունները վերաբերում են նաև **ան** հոլովման պատկանող բայանուններին: Ընդ որում, **ան** հոլովման պատկանող այն գոյականները, որոնք դարձել են թանձրացական կամ էլ դրանցում մթագնել է բայանվանական իմաստը, հոլովվում են **ի** հոլովմամբ (**լուծումի, դիմումի, շահումի** ևն):

Օրինակ՝ *Գաղտնի քարտեզ՝ խոստման դիմաց:* (Հայկական ժամանակ)

Նախապես հնչած խոստումի համաձայն, այս տարվա սեպտեմբերի վերջին գյումրեցի 420 անօթևանները պիտի տոնեին բնակարանամուտը: (Թերթ.am)

Համբարձում հատուկ անունը ևս հոլովվում է **ի**-ով, իսկ բայանունը՝ **ան**-ով (**համբարձման**):

Սեռական հոլովի հոլովանիշ թեքույթները համարելով առաջին կարգի հոլովանիշներ՝ Չահուկյանը մյուս հոլովների հոլովանիշ վերջավորությունները անվանում է երկրորդ կարգի հոլովանիշներ և գտնում է, որ վերջինների նախորդող հիմքերը երկբնույթ են. «որպես այդպիսի հիմքեր կարող են հանդես գալ և առաջին կարգի հոլովանիշներով չձևավորված և դրանցով ձևավորված հիմքերը» :

Որպես երկրորդ կարգի հոլովանիշներ նա նշում է **ից**-ը, **ով**-ը, **ում**-ը, իսկ **ց**-ն և **ք**-ն, նրա հավաստմամբ, առաջին երկուսի դիրքային տարբերակներ են, որ հանդիպում են սահմանափակ դեպքերում:

Բայանունները, ըստ կազմության, լինում են անմասնիկավոր, բաղադրյալ, վերջածանցավոր: Սակավաթիվ են անվերջանմասնիկ

նախաձանցավորները: Բայանուններ կազմող ամենաարտադրողական ածանցը *ուլ-*ն է: Ընդ որում, այն բայանուն կարող է կազմել՝ շրջանցելով բայացման աստիճանը, բայց հենվելով դրա վրա, ելնելով դրանից: Այս ածանցով նոր բայանուններ ևս կարող են կազմվել: Բայանուն գոյականների շարքը հստակ սահմանագծել հնարավոր չէ: Այն կարող է ինչպես համալրվել, այնպես էլ՝ ճիշտ հակառակը: Բայանունները ժամանակի ընթացքում կարող են կորցնել բայի հետ ունեցած առնչությունները, դառնալ թանձրացական՝ դուրս մնալով բայանունների շարքից:

Ժամանակակից հայերենում բայանունների առանձնացման պատճառը դրանց երկակի էությունն է՝ գոյական-անվանական (ձևաբանորեն և ձևականորեն) և բայական (իմաստի տեսակետից): Եվ քանի որ այս երկակի էությունը առանձնապես բնորոշ է գործողության անուն գոյականներին, ուրեմն բայանուններ համարում ենք հենց վերջիններս:

Բնական է, գոյական անվան էությունից բխող շարահյուսական առանձնահատկությունները բնորոշ են նաև բայանուններին:

Ինչպես գիտենք, բառակապակցությունները կազմվում են այս կամ այն խոսքի մասի համակարգի մեջ մտնող բառերից՝ նրանց իմաստային և քերականական ընդարձակումով: Ուստի բառակապակցությունները խմբավորվում են լրացյալի խոսքիմասային պատկանելության հիմունքով: Ըստ այսմ էլ հայերենում տարբերակում ենք գոյականի, ածականի, բայի, մակբայի, թվականի, դերանվան բառակապակցություններ:

Բայանունները ևս կարող են ստանալ տարբեր խոսքի մասերով լրացումներ, բայց դրսևորվող հիմնական առանձնահատկությունները կապվում են հատկապես բայանվան՝ գոյականով, կապերով և կապական խնդիրներով, մակբայով լրացումների հետ:

Հարկ է նշել նաև, որ բայանունները, լինելով վերացական գոյականներ, հազվադեպ են ստանում թվական լրացումներ (*օրինակ՝ երեք մեջբերում, մեկ ահագանգ, երկու արձագանք* ևն):

Աբեղյանը գրում է. «Առարկաները միմյանց հետ հարաբերություն ունին իրենց գործողությամբ կամ դրությամբ, իսկ գործողությունը կամ դրությունն արտահայտվում է բայով: Այս պատճառով կախման հոլովները դառնում են խնդիր բայերի: Մյուս տեսակի բառերն էլ, երբ խնդրում են մի հոլով, կամ բայահաղորդ են, ինչպես դերբայները և բայական անուններն ու ածականները (*մուտք, գալուստ, սիրելի, արժանի*), կամ թե խնդրառու գոյականի և իր խնդրի մեջ զորությամբ հասկացվում է մի բայական գաղափար, ինչպես, *Տիգրանի գիրքը, - Տիգրանին պատկանած գիրքը*»:

Փաստորեն, Աբեղյանը խնդրառությունը դիտում է իբրև բային հատուկ քերականական կարգ, որը կարող են ձեռք բերել նաև բայահաղորդ բառերը: Նույնիսկ այն դեպքերում, երբ խնդրառու բառը ոչ բայ է, ոչ էլ բայահաղորդ բառ, դարձյալ «գործությամբ» հասկացվում է մի բայական գաղափար, և դա է պայմանավորում տվյալ կախման հարաբերությունը:

Խնդրառությունը պայմանավորված է բայի բառային (բառիմաստային) և ձևաբանական (սեռային) առանձնահատկություններով:

Ինչպես արդեն նշել ենք, բայանունը սեռի քերականական կարգից զուրկ է, և բայանվան մեջ համատեղվում են ներգործականության և կրավորականության իմաստները, և կիրառությունից կախված՝ բայանունն արտահայտում է մերթ մեկը, մերթ մյուսը: Այդ է պատճառը, որ գործողության անուն բայանունները կարող են պահանջել ներգործող խնդիր:

Բայանունները կարող են ունենալ զանազան բայական լրացումներ՝ կախված այն բայիմաստից, որին հաղորդակից են: Այս մասին խոսել է նաև Ս. Գյուլբուդաղյանը իր «Միակազմ նախադասությունները ժամանակակից հայերենում» աշխատության մեջ: Նա գրում է. «Եթե անվանական նախադասության գերադաս անդամն արտահայտված է դերբայով կամ գործողության, վիճակի առարկայացված իմաստ արտահայտող գոյականով, կարող է ունենալ բայական լրացումներ»:

Բայանվան երկակի՝ գոյականական ու բայական բնույթից բխում է նրա խնդրառության մեջ դրսևորվող որոշ երկակիությունը: Բայանվան բայիմաստով պայմանավորված թեք հոլովներով լրացումները տրամաբանորեն պահանջում են բայական լրացումների տրվող հարցեր, սակայն ձևականորեն հաճախ կարող են ընդունել նաև անվանական լրացման հարցեր (որոշչային), իսկ որոշ դեպքերում որոշչային հարցերը նույնիսկ ձևականորեն անհամատեղելի են:

Վ. Քոսյանը, խոսելով բառակապակցությունների, դրանց ստորադասական հարաբերության, լրացում-լրացյալի մասին, գրել է. «Լրացում ստանալը պայմանավորված է գլխավոր բառի (լրացյալի) բառային իմաստով և ձևաբանական առանձնահատկություններով: ...Լրացյալի իմաստային հատկանիշով պայմանավորված լինելով է բացատրվում այն երևույթը, որ նույնարմատ բայը և ածականը, ածականը և գոյականը, գոյականը և բայը կարող են ստանալ նույն տիպի լրացումներ: *Օրինակ՝ գրուցել սպազայի մասին, գրույց սպազայի մասին, գրկել մի բանից, գուրկ մի բանից* ևն:

Լրացումների բառային իմաստը ևս նշանակություն ունի տվյալ տեսակի բառակապակցությունների կազմության մեջ: Մի շարք դեպքերում լրացյալի

հետ կապակցվում են միայն որոշակի իմաստային խմբին պատկանող բառեր»:

Որպես դիտարկում՝ նշենք, որ մամուլում հատկապես շատ են սեռական-տրական հոլովով կողմնակի խնդիր կամ կողմնակի ենթակա լրացումները: Սրա պատճառը հենց միևնույն բայանվան դիմաց և՛ ներգործական սեռի, և՛ կրավորական սեռի բայ ունենալն է: Եթե, օրինակ, **«Քաղաքապետարանի կայքում սխալների ուղղումը դժվար գործ է»** վերնագրում լրագրողը օգտագործեր համապատասխան անորոշ բայը, ուրեմն պիտի գրեր կամ **«Քաղաքապետարանի կայքում սխալներ ուղղելը դժվար գործ է»**, կամ **«Քաղաքապետարանի կայքում սխալների ուղղվելը դժվար գործ է»**: Ինչպես դժվար չէ նկատել այդ արտաքուստ աննշան փոփոխությունից իմաստային նրբերանգ է առաջ գալիս. ընդգծվեց գործողության կատարողը, ոչ թե գործողության գաղափարն առհասարակ, որն էլ իր հերթին առավել ընդգծեց վերնագրի առանց այդ էլ ընդդիմադիր ուղղվածությունը: Այս և նման երևույթներից խուսափելու համար լրագրողի համար ավելի շահեկան է օգտագործել ավելի ընդհանրական, ավելի վերացական հասկացություններ, ինչպիսիք են բայանունները, և ոչ թե բայեր, որոնցով ընդգծվում են գործողության կատարողները: Ինչ վերաբերում է երկրորդ տարբերակին, այն համեմատաբար անբարեհունչ է

Եզրակացություններ

Ուսումնասիրելով բայանուններն և դրանց լրացումները արդի հայ մամուլում՝ հանգել ենք ներքոհիշյալ եզրակացությունների:

Նախ և առաջ բայանունները գոյականների շարքում առանձնանում են, քանի որ դրանք դրսևորում են այնպիսի քերականական առանձնահատկություններ, որոնք ոչ բոլոր գոյականներին է, որ բնորոշ են: Այդ առանձնահատկությունները պայմանավորված են բայի հետ ունեցած բառակազմական և ծագումնային կապով: Ընդ որում, պարզել, թե բայանուններն ածանցված են բայից, թե գոյականից, գրեթե անհնար է: Գրաբարի քերականներից սկսած մինչև 20-րդ դարի քերականները, ուսումնասիրելով բայանունները, ուշադրության կենտրոնում են ունեցել բայանունների խնդրառությունը (Մ. Չամչյան, Ա. Բագրատունի, Ա. Այտընյան, Մ. Աբեղյան, Ա. Աբրահամյան, Լ. Մաքսուդյան):

Բայանունները այն գոյականներն են, որոնք անվանում են գործողություն, այսինքն՝ գործողության անուն բառեր են, որոնք համապատասխան բայից տարբերվում են լեզվական արտահայտությամբ և գոյականին բնորոշ քերականական առանձնահատկություններով: Բայանունները համապատասխան բայից տարբերվում են նաև նրանով, որ ներգործական սեռի բայերին հաղորդակից բայանունները միաժամանակ հաղորդակից են կրավորական սեռի բայերին:

Բայանունները, լինելով վերացական գոյականներ, անհաշվելի են և համեմատաբար քիչ ենք հանդիպում դրանց՝ հոգնակի թվով կիրառությունների, ընդ որում բայանունների հոգնակին ընդգծում է սոսկ գործողության կատարման բազմապատիկությունը, տևականությունը: Բայանունները հոլովվում են *ի, ան, յան, ու/ա, վան* թեքույթներով:

Բայանունները դրսևորում են նաև շարահյուսական որոշակի առանձնահատկություններ: Դրանք, դառնալով անվանական անդեմ նախադասության գերադաս անդամ, հնարավորություն են տալիս արտահայտել այնպիսի գործողության գաղափար, որն ընդհանուր ժամանակային կարգից դուրս է: Այս տիպի նախադասությունները ավելի հաճախ հանդիպում են գեղարվեստական խոսքում:

Բայանունները լրացումներ ստանում են գոյականի ուղղական և թեք հոլովածներով, կապերով և կապի խնդիրներով, մակբայով: Զուրկ լինելով բայական սեռի կարգից (ինչպես նաև ժամանակի և կերպի)՝ բայանունները ուղղական-հայցական հոլովով ուղիղ խնդիր առնել չեն կարող, թեև

բայիմաստի թելադրանքով կարող են ունենալ ներգործող խնդրի իմաստով լրացումներ:

Բայանվան լրացական կապակցությունները հանդիպում են վերնագրային-անվանողական կապակցություններում: Բայանունները հաճախակի են ստանում կապերով և կապական խնդիրներով լրացումներ: Լրացյալ բայանունը կարող է կապով և կապական խնդրով լրացում ստանալ ոչ միայն նույն հարաբերությամբ և նույն ձևով, այլև տարբեր: Դեռ ավելին, արմատակից բայը կարող է կապային խնդրառություն չունենալ, մինչդեռ արմատակից բայանունը կարող է կապով և կապական խնդրով լրացում ստանալ: Բայանուններին բնորոշ է մակբայ լրացում ստանալը: Առավել հաճախակի կարելի է հանդիպել այնպիսի բառակապակցությունների, որտեղ լրացումն արտահայտված է ձևի մակբայով:

Գոյականի լրացումներից որոշիչն ու հատկացուցիչը սովորական շարադասության ժամանակ կանոնավորապես դրվում են գոյականից առաջ: Բայանունների դեպքում ևս այդպես է: Իմաստային տարբեր նրբերանգներով պայմանավորված՝ լրացումները կարող են լինել և հետադաս դիրքում: Թեև ուղղական-հայցական հոլովաձևով դրված լրացումները հիմնականում վերջադաս են:

Գրականության ցանկ

Աբեղյան Մ., Հայոց լեզվի տեսություն, Երևան, 1965:

Աբրահամյան Ա., Բայր ժամանակակից հայերենում, Երևան, 1962:

Ասատրյան Մ., Բայի սեռերը ժամանակակից հայերենում, Երևան, 1959:

Գալստյան Ս., Ածանցումը և ածանցները ժամանակակից հայերենում, Երևան, 1978:

Գյուլբուդաղյան Ս., Միակազմ նախադասությունները ժամանակակից հայերենում, Երևան, 1967:

Մաքսուդյան Լ., Բայանուն գոյականը ժամանակակից հայերենում, Երևան, 1984:

Ներսիսյան Բ., Եվս մեկ անգամ բայասեռի մասին, «Կանթեղ» գիտական հոդվածների ժողովածու, Երևան, 2005:

Ջահուկյան Գ., Քերականական և ուղղագրական աշխատությունները հին և միջնադարյան Հայաստանում, Երևան, 1954:

Ջահուկյան Գ., Ժամանակակից հայերենի տեսության հիմունքներ, Երևան, 1974:

Քոսյան Վ., Ժամանակակից հայերենի բառակապակցությունները, Երևան, 1975:

А. М. Пешковский. Русский синтаксис в научном освещении. М., 1956:

Պարբերականներ` Առավոտ, Հայկական ժամանակ, Ազգ, 168 ժամ, Թերթ.am, Մարդիկ.am , Լուրեր.com, News.am, Լրագիր.am, Սլաք.am: